011401.006 Մասնագիտական մանկավարժություն
011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
011401.10.6 Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա
Մանկավարժության բակալավր

<u>Ընդհանրական վերջնարդյունքներ</u>

1. Կրթության ոլորտի զարգացման ընդհանուր միտումների խորը իմացություն:
2. Սեփական կրթական կարիքները վերհանելու և իր հետագա ուսումնառությունը շարունակելու վերաբերյալ ինքնուրույն որոշում կայացնելու ունակություն:
3. Թիմում աշխատելու, իր և թիմի մյուս անդամների աշխատանքի կազմակերպման և արդյունքների համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն:
4. Մասնագիտական գործունեության վերջնարդյունքները, համապատասխան նպատակները, խնդիրները, քայլերը և իրականացման մեթոդները որոշելու և գնահատելու կարողություն:
5. Մասնագիտական գործունեության պլանավորելու, իրականացնելու և գնահատելու գործընթացում, ինչպես նաև մասնագիտական ոլորտին առնչվող հետազոտություններում փորձարարական տվյալներ հավաքելու, մշակելու և մեկնաբանելու նպատակով ՏՀՏ-ները կիրառելու կարողություն:
6. Իր մասնագիտական գործունեությունը կրթության որակի ապահովման չափորոշիչներին համապատասխան կազմակերպելու կարողություն՝ ղեկավարվելով ազգային և համազգային արժեքներով
7. Պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում նախընտրելի վարքագծի դրսևորում
8. Հիմնարար գիտելիքների տիրապետում օտար լեզվով հաղորդակցվելու համար:

<u>Մասնագիտական վերջնարդյունքներ</u>

1. Ադապտիվ սպորտի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ոլորտի հիմնական հասկացությունների, մեթոդների, ոլորտին առնչվող հայեցակարգերի ու տեսությունների իմացություն
2. Անձի զարգացման անատոմիական, ֆիզիոլոգիական, կենսամեխանիկական, հոգեբանական, մանկավարժական առանձնահատկությունների և օրինաչափությունների իմացություն:
3. Ընտրած մասնագիտության սոցիալական նշանակությունը, էությունը ընկալելու, ծառացած հիմնախնդիրները գիտակցելու և լուծման ելքերը որոշելու կարողություն:
4. Ֆիզկուլտուրային կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան ֆիզիկական դաստիարակության պլանավորման փաստաթղթերի կազման կարողություն:
5. Մասնագիտական գիտելիքների կիրառման կարողություն՝ կազմակերպելու և իրականացնել կրթության, դաստիարակության և մարզման գործընթացները, խաղային և

աշխատանքային գործունեությունը՝ ապահովելով ուսումնառողների բազմակողմանի ներդաշնակ զարգացումը:

6. Ստեղծագործական մոտեցումների կիրառման կարողություն ֆիզիկական դաստիարկության նոր և գոյություն ունեցող միջոցների օգտագործելու տեսակետից՝ հաշվի առնելով անձի տարիքային զարգացման առանձնահատկությունները:
7. Ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու կարողություն՝ կիրառելով ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաները և մեթոդները: